Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
սեպտեմբերի 17-ի N 1072 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԶՆՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական (բացառությամբ բնության հատուկ պահպանվող տարածքների) անտառներում հատատեղերի հատկացման և տեղազննման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հատատեղն անտառամաս է, որտեղ նախատեսված է կատարել բնափայտի մթերման աշխատանքներ:

II. ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

3. «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի (այսուհետ՝ անտառտնտեսություն), աշխատողները հատատեղերի հատկացումից առաջ կատարում են հատատեղի համար հատկացվող անտառամասերի՝ բնական պայմաններում ուսումնասիրում, տեղազննում և հաշվեգնահատում:

4. Հատատեղերի հատկացման նախապատրաստական աշխատանքները կատարվում են ամռան-աշնան ժամանակահատվածում՝ հատումներին նախորդող տարվա ընթացքում:

5. Հատատեղերի հատկացումից առաջ կատարված նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո կազմված նյութերը (լրացված հատատեղի հաշվեգնահատ-

ման ցուցակը և հատատեղի անձնագիրը) անտառտնտեսությունը տրամադրում է կազմակերպությանը, որը, ամփոփելով դրանք, ըստ անտառտնտեսությունների՝ հաջորդ տարվա հաշվարկային հատատեղերը (տարեկան հատումների ծավալները) հաստատելու համար ներկայացնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

6. Ըստ անհրաժեշտության՝ ընթացիկ տարում կարող է հատկացվել լրացուցիչ հատատեղ (հատատեղեր)՝ սույն կարգի դրույթներին համապատասխան:

III. ՀԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԾԱՌԵՐԻ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԸ

7. Հատման նշանակված ծառերի փայտանյութի հաշվարկը, կախված հատման եղանակից, կատարվում է՝

1) ըստ տարածքի (հա).

2) հատման նշանակված ծառերի քանակով.

3) մթերված փայտանյութի ծավալով:

8. Հաշվարկը՝ ըստ տարածքի, կատարվում է համատարած հատումների ժամանակ:

9. Հաշվարկը՝ ըստ հատման նշանակված ծառերի քանակի, կատարվում է՝

1) անտառավերականգնման հատումների.

2) խնամքի՝ նոսրացման, անցումային հատումների.

3) սանիտարական՝ ընտրովի.

4) այլ հատումների (առանձին ծառերի) ժամանակ:

10. Մթերված փայտանյութի ծավալով հաշվարկը կատարվում է՝

1) խնամքի՝ լուսավորման և մաքրման հատումների ժամանակ.

2) խնամքի՝ նոսրացման և անցումային հատումների ժամանակ, եթե հատման նշանակված ծառերի միջին տրամագիծը պակաս է 8 սմ-ից:

11. Մթերված փայտանյութի ծավալով հաշվառման ժամանակ անտառահատման տոմսում փայտանյութի մթերման նախատեսվող պաշարը նշվում է փորձահրապարակներից ստացված տվյալների հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 897-Ն որոշման 37-րդ և 38-րդ կետերի:

12. Հաշվառման բոլոր տեսակների դեպքում փայտանյութի ծավալը որոշվում է խտացված (խիտ) խորանարդ մետրերով:

13. Հատման նշանակված ծառերի տրամագիծը հարթ տեղանքում՝ չափվում է հողի մակերեսից կրծքավանդակի (միջին՝ 1,3 մ) բարձրության վրա, իսկ լանջի դեպքում կրծքավանդակի (միջին՝ 1,3 մ) բարձրությունը չափվում է հորիզոնականով, ծառի կողքից: Չափումները կատարվում են չափիչ երկմատով (ծառի տրամագիծը չափող գործիք, որը կազմված է մեկ շարժական և մեկ անշարժ մատից ու քանոնից): Ճշգրիտ տրամագիծն ստանալու նպատակով չափումը կատարվում է միմյանց հակադիր կողմերից և դուրս է բերվում միջինը: Չափիչ երկմատից որպես տրամագծային ցուցանիշ վերցվում է այն թվանշանը, որը երևում է շարժական մատի ներսի կողմից:

14. Հաշվառման ենթակա ծառերի համարակալումն ու դրոշմումը կատարվում են հողի մակերեսից կրծքավանդակի (միջին՝ 1,3 մ) բարձրության վրա 8 սմ և ավելի հաստությամբ տրամագծից սկսած, ըստ հերթականության՝ ծառի արմատավզիկի վրա կեղևը նախապես տաշելով: Համարակալումը կատարվում է յուղաներկով և ընթեռնելի՝ բացառելով սպիտակ և դեղին գույները:

15. Հատման ենթակա, բայց չհամարակալված և չդրոշմված՝ մինչև 8 սմ տրամագիծ ունեցող ծառերի տրամագծերը չեն չափվում և չեն հաշվառվում հաշվեգնահատման ցուցակում, սակայն բնի կենտրոնական մասում կատարվում է թեթև տաշվածք կամ ներկվում է, որպեսզի հատատեղի շահագործման ժամանակ լինեն նշմարելի:

16. Անտառահատման տոմսով սահմանված ժամկետներում հատատեղերի շահագործման ավարտից հետո կամ հատմանը զուգահեռ կատարվում են հատատեղերի մաքրման աշխատանքներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 7-ի N 1412-Ն որոշման V բաժնի:

IV. ՀԱՏԱՏԵՂԻ ՏԵՂԱԶՆՆՈՒՄԸ

17. Հատատեղի շահագործումից (հատում, քարշակում և փայտանյութի դուրսբերում) հետո, կազմակերպության և անտառտնտեսության կողմից մինչև հաջորդ տարվա հունիսի 15-ը կատարվում է հատատեղի տեղազննություն:

18. Հատատեղի տեղազննության արդյունքում կազմվում է հատատեղի տեղազննման ակտ:

19. Հատատեղերի տեղազննման արդյունքում գրանցված թերությունների շտկման ուղղությամբ անտառտնտեսությունն իրականացնում է համապատասխան միջոցառումներ, իսկ թերհատների շահագործումն իրականացվում է կազմակերպության որոշմամբ՝ անտառահատման տոմսի ժամկետի երկարաձգման միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ